

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՇՈՎՈՒՅՑ ՎԱՆՔԻ ՏԼՈՒԹ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Ծովուց վանքը, կամ աւելի ընդհանրացած անունով Ծովք ԴԵԼ-Էակը, կը գտնուէք Տլուք զաւառին մէջ, Անթէպէն զէպի հիւսիս արեւմուտք։ Եկեղեցին կառուցուած էր յանուն Ս. Աստուածածնին։

ՊԱՏՄԱԿԱՆ. — ԺԲ. դարու սկիզբը, թերեւս ԺԱ. գարու վերջերը, Ծով զզեակի տէրն էր Պահաւունի Ապիրատ իշխանը, Գրիգոր Գ. և Ներսէս Շնորհալի կաթողիկոսներու հայրը, որ դաւաճան նետով մը նահատակուած է 1111 թուին։

Գրիգոր Գ. Պահաւունի, որ հայրապետական աթոռ բարձրացած էր 1113 ին, Քեսունի կարմիր վանքին մէջ, և հաղիւ Յ տարի անցուցած էր այնտեղ, տեսնելով Քեսունի հայկական իշխանութեան ջընջումը գժբախտ պարագաներու տակ, յարմար դատեց հայրապետանոցը կարմիր վանքէն փոխազրել իրենց սեփական Ծով Դղեակը, ուր կարեւոր չինութիւններ ալ կատարեց այդ աթիւ։

Այդ թուականէն (1116) սկսեալ՝ քառորդ դարու ըջանի մը վերաբերմամբ յիշատակարաններ յայտնի չեն։ ԺԲ. դարու հինգերորդ տասնամետկը թեւակոխելէ Ետք է որ հանդիպինք հետեւեալ պատմական յիշատակութեանց։

1. — Կիլիկեան Տարեղիբքը^(*) ՇԶՓ Շ-1140 թուին տակ կը զրէ. «Զայսու ժամանակաւ սուրբ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս կայր ի փոքրագոյն զղեակն Ծովք, ի սահմանս Տլոսյ, զոր ստացեալ էր սուրբ հայրապետն զնոց ի բընձէն Անտիոքայ և ծեղ զեղ շուրջն ի կը (60,000) դահեկան, և եկեալ անդ բնակէր հանդերձ եղբարը տէր Ներսիսիւ, և աշակերտօքն, և ամենայն կահիւ սրբոյ աթոռոյն, և ամենայն

աղդայինոքն իւրեանց» (Հրատ. Աղքակեան, Վենետիկ, 1956, էջ 161)։

2. — Ծովուց Վանքին Ստեփանոս կրօնաւորի հրահանգով կարապետ քահանայ Ռուհայի մէջ ՇԶՓ Շ-1144 թուին կ'օրինակէ Աւետարան մը, որուն յիշատակարանին մէջ կը կարդանք. «Գրեցաւ սուրբը և քրիստոնածիր կտակս Աւետարանիս ի զաւառիս Միջազնատաց յաստուածալահ և ի բազմահանգակ քաղաքո Ռուհայ, ձեռամբ իմոյ նուաստի կարապետ նուաստ քահանայի . . . հրամանաւ Ստեփանոսի սրբազնն եւ մաքրափայլ կրամաւորի, սպասաւորի որոյ նշանին, որ է ի Ծովուց վանան, մերձ ի ստհմանս ամբոցին, որ կոչի Հռոմեկայաց . . .» (Յովակիեան, Յիշատակարանք Զեռազրաց, 1951, էջ 356-7)։

3. Երոյիշեալ Ստեփանոս կրօնաւորը իր կարգին յիշատակարանով մը կը յայտնէ թէ սնած և ուսած է Ծովուց վանքին մէջ, ապահովարար զտնուելով Գրիգոր Պահաւունի կաթողիկոսի աշակերտներուն շարքին. «Ես Ստեփանոս նուաստո յորդիս եկեղեցւոյ . . . որ ոչ միայն եմ կրաւնաւոր, այլ և յետին քահանայ՝ անեալ և վարժեալ դպրութեամբ և ուսմամբ ի նմին վանս, որ նշանակեալս է աստ, ստացայ զեւետարանս զայս ի յիշատակ հոգւոյ իմոյ . . .» (Նոյն, էջ 357)։

3. — Բայց Գրիգոր Պահաւունի երկար տակն հանգիստ պիտի չկրնար ընել Ծովուց վանքին մէջ, վասնդի «Բ թուին ՇԶՓ Շ-1150 զարձեալ եկն սուլուանն յիկոնիոյ Մասուտն, և էտո զՊէհեսնի զոր առանց պատերազմի ևսուն ի նա։ Նոյնպէս էտո և զԲհուուն, զմազպն և զՓարզման. և անտի Եկն ի Թլուաշար, և պատեաց զնա պատնշօք, և ոչինչ կարաց առնել, քանդի որդի կոմսին անդ էր և ունէր արս պատերազմողն. և ազա զերկիբն կոտորեաց և աւարաւ զնոց։ Զայս տեսեալ սուրբ հայրապետն Հայոց տէր Գրիգորիս, զի այնքան տկարացաւ զօրութիւն քրիստոնէից, և ինքեանք ոչ ունէին ամբոց ապաստանի, և ի Ծովք բերդն իւրեանց երկնչեին դադարել. ապա խորհեցան զնալ յարեւելս առ թագաւորն Վրաց, զի Անի ի ձեռս նորա էր, թերեւս անդ զտանիցն անդորրութիւն և տեղի ապաստանի անկասկած ի թշնամեաց։

(*) Այս Տարեղիբքը հրատարակէին կողմէ ընծայուած է Ամբուս Սպարապետին. բայց ճիշդ չէ այդ, ինչոքէս ցոյց տաւած ենք այլուր (Միոն, 1960, էջ 304-5)։

Աւ թագեալ զեղբայրն իւր զտէր Ներսէս
անդ, մինչեւ ինքն դնասցէ և զարձգի, և
ապա ամենայն տոհմիւքն և ընչիւք դնա-
ցնէ: Իսկ ի դնալը տէր Գրիգորի՝ պատահ-
եաց զի դնաց ի Թլրպաշար, և տիկինն ձօս-
լընին անդ էր, և հարցանէր ընդ սուրբ Հայ-
րապետն զպատճառու դնալոյ նորա յարե-
ւելու. և նա պատմեաց նմա. և տիկինն այն
արգել վնա ի ճանապարհէն՝ տալով նմա
զանձատչելի բերդն Հոռոմկլայն ի բնակու-
թիւն. ընդ որում յոյժ ուրախացաւ սուրբ
Հայրապետն, և դարձեալ եկն առ եղբայրն
իւր տէր Ներսէս ի Ծովքն, և պատմեաց
նմա զպատճառու դառնալոյն, և վսոստումն
տիկինուն ձօսլին վասն Հոռոմկլային՝ զի
տացէ աթոռ Հայրապետացն Հայոց: Իրբեւ
լուաւ տէր Ներսէս և այլքն առ հասարակ
ուրախացան յոյժ, զի մեծ էր երկիւղ առ
նոսա յահէ անօրինացն. և ապա առեալ
զամենայն ինչս խրեանց և զազդ, զնացին ի
Հոռոմկլայն և ամբացան յահէ անօրինացն.
և զինի ժամանակաց ևսուն ձօսլին ժեռ
(15,000) դահեկան ի զինն Հոռոմկլային»
(Կիլ. Տարեգիրք, էջ 167-9):

4.—Վերոգրեալ սպատմական տեղեկութիւնները Ծնորչալին ալ կը հաստատէ իր մէկ յիշատակարանին մէջ, զրելով.
«Ի հինգ հարիւր թուականի,
ինընտասին [ին] նոյն (*) միակի [= 599]
շարագրեցաւ բանրս տաղի, [= 1150]
եղանակս երած չոփ,
ի դառնագոյն ժամանակի,
շար և զըմնեայ և անրարի,
որում Մատուարն յիկոնցի,
մելիք սուլտանն հազարացի . . .
առեալ զբաղաքն Գերմանի . . .
իսկ ի միւսում հասեալ տարի,
կըրկին եհաս յայնմ աշխարհի,
էաո զամուրըն Պէէսնի,
տալով վատացն առանց մարտի . . .
և բգիւսոն քաղաք բարի,
և զրիտապան կարդ ըստ կարգի,
ի թրլովաշար հասեալ լինի . . .

(*) Տպուած է «ինքնառարկ նայեց միակի», մենք կատարեցինք զերոգրեալ սրբազրութիւնը, համեմատեակիւն յեւսուսակուած պատմական դէպքերու առարկիւր կրիկեան Տարեզրքին և Քեւանցի Դրեզուր լորկի Ժամանակագրութեան մէջ (Տե՛ս Մ. Առաջիցի, Երուսաղէմ, էջ 504-5):

մեք ի դղեկէն որ Շով կոչէ,
որ սեփական մեր էք տեղի...
անցեալք ի յայս կոյս Տօրոսի,
ընակեալ հանդէպ ամբականի,
որ այլասեռ Քարը^(*) անուանի...
որ բարեալաշտ մեծ իշխանի,
որոյ թորոս վերաձայնի,
որդի յաղթողըն Լեւոնի,
և Կոստանդեայ և Ծուրենի,
տազս երդեցաք քաղցրաձայնի^(ւ),
դաշնակելով յիմաստ բանի,
Վերափոխման Աստուածածնի
և կենսատու սրբոյ Խաչի...
Ներսէս եղբայր Հայրապետի
Հայոց Մեծաց Գրիգորիսի...
նըստի ի կլայն Հռոմականի...» (Տաշ-
ան Յուցակ, էջ 513-4) :

5.— Յաջորդ տարին, 1151ին, Աւետա-
նին մը կը գրուի Շով ամբոցին մէջ, ըստ
Լուենեալ յիշտակարանին. «Ցամի վեց-
արիւրերորդի արամեանս տոմարի, ի հայ-
ազետութեան տեառն Գրիգորիսի՝ Հայոց
Եղինակի և եղբայր նորա՝ Ներսիսի, և ի
ոնակալութեան Միջերկրեայս Մելիք Մա-
ռուսին՝ յիսմայելէ և յիկոնիսն քաղաքէ,
ըեցաւ Աւետարանս այս յընտիր և ի ստոյգ
ուրինակէ՝ յամբոցիս որ կոչի Շով, ընդ-
ովանեաւ սրբոյ Աստուածածնիս և սրբոյ
անիս...» (Յիշտ. Զեռազբաց, էջ 361) :

6.—*Տառնեակ մը տարիներ կ'անցնին և
սպա Քեսունցի Գրիգորի մօտ կը Հանդի-
պինք հւտեւեալ յիշատակութեան Մովք
երդի մասին. «Յայտմ ամի տէրն Անտիռուուն,
որ և բրինձ կոչի և անուն նորա սիր Ալ-
ազա, և կն յաւուրս աշնանային և յանհոզո
ղեալ իջանէր ի Տլըոյ (**) Երկիրն, և ի
երդն կաթողիկոսի որ կոչի Մովք, ասպա-
ռակս սփոնէր ի չուրջակայ Երկիրն, աւար
ունելով և գերելով զթուրքմանսն զոր*

(*) Ենքուսալին Այլասեա Քար բառերով Համացային չափանարկեր, ինչպէս կը կարծեն ոմանք, այլ անիկ Քարին, ուր թորոս իշխան հետազային ալ պատուան կը դանէ բառ վկայութեան Կիլ. Տակ կը քրքին Աւունի, ուրգին Լևոնի, Երկուցեալ և Եղբայրին. Եւս Թորոս, ուրգին Լևոնի, Երկուցեալ և մանէ, ամրացուցանիւր զիկնն իւր և զորդիս և գանձ ի Տաճիկ-Քարին, և ինքն զօրօր իւրով շրջէր գժուար և մացաւուտ վայրու և ի խորածոր Տաւառի» (Էջ 177-8) :

(**) $\mathcal{S}_{\text{upper}} \leq \mathcal{S}_{\text{lower}}$, $\mathcal{S}_{\text{upper}} \in \mathcal{S}_{\text{lower}}$

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Ծր. 3 Հոկտ.— Տօն Խաչի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Նշան վերհամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Յովսէփ Վլդ. Մամուր:

● Կիր. 4 Հոկտ.— Բարեկենդան Վարազայ Ա. Խաչի պահոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, Ա. Լուսաւորիչ և կեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վաչէլ Արդ. Խոհանոսուեան:

● Ուր. 9 Հոկտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Հզուոց Ա. Գէորգ և կեղեցւոյ մէջ: Հանդիսավորն էր Լուսաւարապետ Գէրչ. Տ. Հայրիկ Արքեպու:

● Ծր. 10 Հոկտ.— Ա. Գէորգայ օօրավարին: Ա. Պատարագը մատուցուեցաւ, բառ սովորութեան, Հզուոց Ա. Գէորգ և կեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան: Բարոզեց Հոգչ. Տ. Ներսէհ Վլդ. Բաղուցնեան, բնարան ունենալով չ՛մ սուրբ Գէորգ, պարզունք ազգի ժարդիան», Խօսելով օրուան տանելի սուրբին կեանքին ու խիզան զարծանէութեան մասին և յայտնելով թէ Խաչատարիութիւնը գերազանց ու բարձրագոյն զազաթն է զուհողութեան: Բարօզէն Էտք, արարուղութեանց Հանդիսավոր Լուսաւարապետ Գէրչ. Տ. Հայրիկ Արքեպու, Խօսեցաւ սուրբն անդամ մը Հզուոց Ա. Գէորգ և կեղեցիին մէջ Պատարագ մատուցանելու մէր իրաւունքին մասին, յայտնելով թէ ասիկա վերջամաց դեղեցիին մէկ սովորութիւնն է տասջին զարերու Քրիստոնէարան միացեալ և կեղեցիին: Ա. Պատարագէն Էտք, Միարանութիւնը պատուասիրուեցաւ Հզուոց նոյն վանքի Հոգչ. Տեսչէն:

դտանէր ի սահմանսն՝ ունելով ընդ իւր մարդո հաղար ընդ ձիաւոր, ընդ ծուլուկ, ընդ խարուանդա, ընդ հետեւակ...» (Ա. Ռուհայեցի, Երուսաղէմ, էջ 544):

7.— Եռյնը կը հաստատէ կիլիկեան Տարեղիբքը. «Ի սոյն ամի (Ամ. = 1161) տէրն Անտիքայ Բանազու Բրինձն, առեալ ո. (= 1000) այր ձիաւոր և հետեւակ և զայր նորօք ի դաւառն Տիքոյ ի կաթողիկոսեանց բերդն ի Մովքն, և ասպատակաւորս սփոէր չուրջ զգաւառոքն, գերել և աւար առնուլ զիսորանարնակ Թուրքմանն» (էջ 185):

8.— Մովք զգեակը կը միշտի դարձեալ Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան շրջանին (1173-1193), այս անզամ Սամուէլ Անեցիի Ժամանակադրութեան մէջ. «Այս տէր Գրիգորիս արկանէ հիմն ի Կլայն, և շինէ հոյա-

— Կէսօրէ Էտք, Գէրչ. Տ. Սուրէն Արքեպու, Քէմանէտեանի գլխաւորութեամբ, Միարանութիւնը Հրաշափառական մուտք զործեց Ա. Յարութիւն Տաճար, ուր պատուեցան երեկոյեան ճամերգութիւնն ու Վարազայ Խաչի Խախտածակը՝ Ա. Լուսաւորիչ և կեղեցւոյ մէջ: Ազա կատարուեցաւ Տեղինական Արբանիկաց այցելութեան Հանդիսաւոր Բափոր Տաճարն ներս: Բափորապետն էր Հոգչ. Տ. Յովսէփ Վլդ. Մամուր:

● Կիր. 11 Հոկտ.— Տօն Վարազայ Ա. Խաչին: Գէրեսին և առաւտան ժամերգութիւնները պաշարուեցան ի Ա. Լուսաւորիչ: Ազա Գէրչ. Տ. Սուրէն Արքեպու, մատոյց օրուան Հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գէրեզմանին վրայ:

● Ծր. 17 Հոկտ.— Ա. 72 աշակերտացն Քրիստոնի: Բառ սովորութեան, Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին ներքին զարիթը՝ Ա. Գէորգայ սկզբանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Տաթևի Արքեպու:

● Կիր. 18 Հոկտ.— Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յակոբը: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ներսէհ Վլդ. Բակոր Խախտականց Լուսաւարապետ Գէրչ. Տ. Հայրիկ Արքեպու:

● Ծր. 24 Հոկտ.— Ա. Թարգմանչաց վարդապետացն մերց (Տօն ազգային և եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Աղջանին վրայ Ա. Պատարագը մատոյց Արժ. Տ. Կարապետ Քչնյ. Անդրէսան: Բարոզեց Լուսաւարապետ Գէրչ. Տ. Հայրիկ Արքեպու:, բնարան ունենալով «Յիշեցէք զառաջնօրդն մէր...»: Համառօտիւ խօսելի Էտք օրուան տօնելի սուրբերուն մասին, նորին Գերազապատութիւնը անդրազարձաւ թէ այսօր տօնն է անուան Ամեն. Ա. Պատրիքարք Հօրքանակը թէ Միարանութիւնը պատրիքարքը բարեմասնութիւն մը ժառանգած է Թարգմանիչ վարդապետներուն իւրա-

կապ և կեղեցիի ի նմանութիւն արեւելից տաճարացն. պատրաստեալ ի նմա զդիքս երկուց սուրբ լուսաւորչացն զհօրելղբարց իւրաց, ուէր Գրիգորիսի և ներսիսի: Հանէ և ի Մովքուն զնշխարս մեծին Գրիգորիսի զքեռոյն Արքիրատայ Հաւուն իւրոյ զտէր Վահրամայ և զնէ ընդ երկուց լուսաւորչացն» (Ա. Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 139):

Վերօպքեալ յիշառակարաններու համաձայն ուրին Տլուք գտաւուի Մագուց Վանքը կամ Դղեակը՝ Հայոց Հայրապետութեան աթոռը կը հանդիսանայ մինչեւ ԺԲ. դարու կէսօր, 1150, երբ կը փոխադրուի Հառմէլլայ, աւելի ամուր վայր մը, ուր կը մնայ մինչեւ յաջորդ զարուն վերջերը:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆՆ